

նէն, շատերը զրկեց եկեղեցւոյ խորհուրդներէն եւ նոյնիսկ թագաւորին արգելեց եկեղեցի մանել: Տիրան, չկրնալով տանիլ այս անարգանքը, նոյն այդ եկեղեցւոյ մէջ թոպամահ ընել տուաւ հայոց կաթողիկոսը (347):

Փաւստոս, զոր այժմու բանասիրութիւնը մեր առաջին վաւերական պատմագիրը կ'ընդունի, կ'ողբայ անկեալ կենցաղը Դ. դարու հայութեան, մանաւանդ երբ թոպամահ եղաւ հայոց Յուսիկ կաթողիկոսը: «Յուսիկի թոպամահ ըլլալէն յետոյ անառաջնորդ մնաց հայ ժողովուրդը եւ մոլորեցաւ կոյրի պէս: Կը նմանէր հօտի մը՝ որ մերժած է պահապան շուներու պահպանութիւնը: Իրեն չար օրինակ կ'առնէր իր թագաւորը, կը ձեւէր ու կը գործէր անոր օրինակով: Որովհետեւ ժամանակին ընդունեց քրիստոնէութիւնը՝ իբր մարդկային կրօնքի ձեւ մը, եւ ոչ թէ ջերմեռանդ հաւատքով: Կը շարունակէր սիրել հեթանոսական առասպելները ու հաւատալ եւ հետեւիլ անոնց»:

Դարձեալ Փաւստոս կը պատմէ, թէ երբ հայոց Արշակ Բ. (350-367) թագաւորը գերի էր Պարսկաստան՝ Անյուշ բերդին մէջ, իր Դրաստամատ ներքինին պարսից Շապուհ թագաւորէն հրաման խնդրեց դոնէ օր մը երթալ ուրախացնել իր տէրը:

«Դրաստամատ Անյուշ բերդը դնաց, հոն տեսաւ իր տէրը, քակեց անոր երկաթ կապանքը, ձեռնակապերը, ոտնակապերը եւ անրակապերը, լուաց անոր գլուխը եւ անոր մարմինը լողցուց, ազնիւ պատմուճան հազցուց անոր, բազմոցներ դրաւ եւ վրան նստեցուց, անոր առջին ընթրիք դրաւ՝ ինչպէս վայել է թագաւորի մը, ու մխիթարեց գայն, եւ ուրախացուց դուսաններով»:

Ու դարձեալ Փաւստոսէն գիտենք, որ մեր թագաւորներուն ամենէն հաճելի գրօսանքն էին կերուխումն ու թատերական տեսարանները:

«Ընթրիքի եկաւ Պապ (368-374) թագաւորը, ու բազմեցաւ կերուխումի: ... Երբ գինին բերին եւ ուրախութեան առաջին բաժակը մատուցին Պապ թագաւորին, սկսան նուազել սրնգահարները, քնարահարները եւ փողահարները: Եւ մինչ Պապ թագաւոր ուրախութեան գինին բռնած էր մատներուն մէջ՝ կը նայէր տեսակ տեսակ գուսաններու խումբին»:

Իրարու յաջորդող երեք հայ վեհապետներ, Տիրան, Արշակ եւ Պապ, կը վերստեղծեն այսպէս հին բարքերը, ու անոնց պարզեւած զուարճութիւնները, որոնցմէ գլխաւորն էր գուսաններու խաղը, թատրոնը:

Դժբախտաբար, ոչ մէկ ակնարկութիւն անոնց նիւթին մասին մեր մատենագիրներուն մէջ: Բայց տարակոյս չկայ, թէ գողթան երգերով պատմուած հին դրուագները ի պատուէ էին միշտ, իբրեւ բացառապէս ազգային նիւթեր: Բայց նաեւ յարգի ըլլալու էին տախտական նիւթերը, որովհետեւ հանդիսատեսները զբաղած կ'ըլլային միեւնոյն ատեն գինարբուքով ու շուայտութեամբ:

Ատոր համար է մանաւանդ, որ մեր եկեղեցական հայրերը բունն պայքար բացին այդ հանդէսներուն դէմ, իբրեւ բարքերու ապականիչ:

(Շարունակելի)

ԿԱԼԻ ԻՐԻԿՈՒՆ

Վերջալո՛յս ու վերջալոյսի լուսօրեան մէջ, Ծերուկ մը ու իր սայլը ու գոյգ մը գամէշ:

Սայլի ֆոխնչն ու գամէշի բառաչն ինքնին, Ու ծերուկի երգին հետ բամբ, Մեղեդի մը չէ հեշտալուր. Սակայն, երկինք՝ վերջալոյսն իր վարդաբոյր՝ Անմահութեամբ Քաղցրացուցեք ու պննեք է գայն լիովին:

Վերջալո՛յս ու վերջալոյսի լուսօրեան մէջ, Ծերուկ մը ու իր սայլը ու գոյգ մը գամէշ...

Ծ Ե Ր

Շարք մը համրիչ մատներէն կայս շարունակ, Գիշերն ի բուն ակուսիւն ֆով՝ միս մինակ՝ Ծալլապատիկ կը նստի: Անթեղին մէջ՝ բոց լեգուներ՝ մի առ մի, Հետգիտէ կը մաշի՞ն.

Ո՛չ մէկ կարիք չի խռովեր իր հոգին... Այլ աշխարհէն վիրաւոր, Զոյգ մը արցունք աչքերուն մէջ իր պիտոր, Ամէն գիշեր ակուսիւն ֆով անտարբեր, Հին յուշերով տարուբեր Կը նստի ան միս մինակ, Շարք մը համրիչ մատներէն կայս շարունակ...

ՎԱՀՐԱՄ ՍՕՅԵԱՆ